ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

ԱՌԱՐԿԱ Հայոց լեզու և գրականություն

ՂԵԿԱՎԱՐ Կիմա Օհանեսյան, երկրորդ խումբ

ՀԵՂԻՆԱԿ Սարգսյան Լուսիկ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ 4

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 8

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 13

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 17

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

Հավելված 1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ-ում օրենքով սահմանված կարգով, յուրաքանչյուր երեխա ունի կրթություն ստանալու իրավունք, որը պետք է պատշաճ իրականացվի ուսուցիչ-սովորող-ծնող կապի միջոցով: Կրթական գործընթացի ճիշտ և արդյունավետ կազմակերպման կարևորագույն նախապայմաններից է ծնողների, աշակերտների և մասնագետների միջև համագործակցությունը: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են համագործակցելով, երեխայի կարիքին համապատասխան միջավայրային հարմարեցումների ապահովումն առավել հեշտ է դառնում, ինչի արդյունքում շահում է հենց երեխան: Այս նախադրյալներն են նպաստում որպեսզի դպրոցն ու ընտանիքն ունենան միանման սպասումներ ու օժանդակեն երեխայի ուսման գործընթացին: Սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում մեծ նշանակություն ունի <<Մայրենի>>,<<Հայոց լեզու>> և <<Գրականություն>> առարկաների ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ, քանի որ, այդ առարկաները դասավանդելով, ուսուցիչը ոչ միայն սովորեցնում է մայր լեզուն, այլ նաև դաստիարակում է արժանապատիվ և հայրենասեր քաղաքացի:

Մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի, դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, մոտիվացիայի, աշխատունակության բարձրացման հարցում, սակայն ուսուցիչն ավելի վստահ ու գործուն է առաջ շարժվում, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ համագործակցումը, խնդիրների միասնական վերհանումը, դրանց լուծումները փնտրելու ճանապարհին փոխգործակցությունը: Ստացվում է, որ երկու կողմերը այս գործընթացում փոխլրացնում են միմյանց՝ նպատակ ունենալով անցնցում ապահովել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել <<Հայոց լեզվի>> ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում:

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ընտանիքի՝ որպես անձի սոցիալականացման առաջնային ինստիտուտի, կարևորագույն գործառույթը աճող սերնդի դաստիարակությունը, զարգացումն ու սոցիալականացումն է: Նրանով են պայմանավորված հասարակության վերարտադրության, աճող սերնդի դաստիարակության, սոցիալականացման, նյութական ապահովության, հոգևոր կայուն զարգացման իրականացման հնարավորությունները:

Ծնողները երեխաների առաջին կրթողներն են: Նրանք ունեն իրավունքներ և պարտականություններ իրենց երեխաների կյանքը, մտավոր, ֆիզիկական և արժեքային համակարգը զարգացնելու համար: Ծնողները պատասխանատվություն են կրում նաև դպրոցական երեխաների կրթության համար: Սակայն դժվարին և կարևոր պատասխանատվություն է կրում նաև ուսուցիչը: Ուսուցչի պարտքն է ճանաչել և հասկանալ երեխաների ֆիզիկական և հոգեբանական վիճակները և պաշտպանել նրանց դպրոցական կյանքի բոլոր իրավիճակներում: Դաստիարակչական ներգործությունը մշտապես պետք է ուղեկցվի ընտանեկան դաստիարակության սերտ համագործակցությամբ: Դպրոցում դաստիարակությունն ընթանում է մի շարք ուղղություններով՝ ուսուցում, գնահատում և հասակակիցների հետ փոխադարձ շփումների կարգավորում:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, մարդասիրության հոգով դաստիարակված անձի ձևավորումն է:

Ներկայումս ընտանեկան դաստիարակության համակարգը որոշակի փոփոխություններ է կրում. սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային տեղաշարժերի հորձանուտում աղճատվում է նաև ավանդական ընտանիքի նկարագիրը՝ արդիական դարձնելով ընտանեկան դաստիարակության, դպրոցի, ընտանիքի և ընդհանրապես համայնքի համագործակցության հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից ուսուցիչներն իրենց առաքելությունը պետք է տեսնեն ոչ միայն սովորողներին գիտելիքներ տալու, այլ բարոյական, մարդասիրական հատկանիշներով

օժտված, ազգային և համամարդկային արժեքներ կրող քաղաքացիների, հասարակությանը նպաստ բերող ու գործուն անհատների դաստիարակման մեջ: Այդ առաքելությունը կարելի է իրագործել միայն ուսուցիչների, սովորողների և նրանց ընտանիքների հետ սերտ համագործակցության պայմաններում:

Ուսուցիչների, ծնողների և երեխաների փոխգործակցությունը կարող է արդյունավետ լինել, եթե նշված սուբյեկտներն ստանձնեն փոխհամաձայնեցված աշխատանքի պատասխանատվություն, գործեն միասին, համատեղ ջանքերով պլանավորեն գործունեությունը և իրականացնեն արդյունքների համատեղ գնահատում: Այդօրինակ համագործակցությունը ենթադրում է ուսուցիչների կողմից երեխայի և համատեղ գործունեության նկատմամբ միասնական պահանջներ, երեխայի ուսումնասիրում ընտանիքում և նրա զարգացման ծրագրի կազմում: Միաժամանակ դպրոցի խնդիրն է զարգացնել ծնողների և երեխաների համագործակցության ու հաղորդակցման կարողությունները[1]:

Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ընտանեկան դաստիարակության՝ հարգանքի և վստահության վրա հիմնված ոճերը, ծնողների հեղինակությունը, ընտանիքում երեխայի հետ շփման առանձնահատկությունները նպաստում են ներընտանեկան կապերի ամրապնդմանը, բարոյական բարձր պատասխանատվության մթնոլորտի, փոխօգնության ավանդույթների ձևավորմանը:

Ընտանիքը եղել և տեսանելի ապագայում էլ կլինի աճող սերնդի դաստիարակության հիմքը: Ծնողների հետ շփման ժամանակի սղությունը, փոխգործակցության սահմանափակումը, ընտանեկան դաստիարակության ավտորիտար ոճը ընտանիքում բարոյահոգեբանական և հուզական հարաբերությունների քայքայման պատճառ են դառնում, մինչդեռ դրանք ընտանեկան դաստիարակության արդյունավետության հիմնական այն պայմաններն են, որոնք անհրաժեշտ են երեխայի բնականոն զարգացման համար, և որոնց բացակայությունը կարող է հանգեցնել ներընտանեկան հարաբերությունների ճգնաժամի, օտարացման և սերունդների միջև կյանքի իմաստաձևավորող կապերի ընդհատման:

[1] Петренко, М.В. Психология и педагогика[Текст] / М.В. Петренко. – М., «Быстров», 2009. – 42с., с. 18.

Ժամանակներն այնպիսին են, որ սովորողներն ավելի ինքնուրույն ու կազմակերպված են դարձել, հաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են վերջիններիս համար անսպառ տեղեկատվության աղբյուր: Այս համատեքստում ոչ միայն լավ օրինակը կարող է սովորողի համար դառնալ կյանքի ուղենիշ, այլև վտանգավորն ու բացասականը, ուստի վերջիններիս ծնողների հետ ուսուցիչների, մանկավարժական այլ աշխատողների շարունակական համագործակցությունը առանցքային դերակատարում ունի: Չի կարելի աչք փակել սովորողի վարքի վատ դրսևորումների վրա: Ուսուցիչն ու ծնողը պետք է իրենց ջանքերն ուղղեն, որպեսզի սովորողները կյանքում ունենան հաջողություններ, կրթության մեջ՝ առաջադիմություն, ինչպես նաև ունենան կայուն վարք: Սա երկարատև ու համակարգված աշխատանքի արդյունք է, որը նպատակ ունի սովորողի համար ստեղծել կրթության բարենպաստ միջավայր:

Հավելենք, որ համագործակցությունը և փոխգործակցությունը տեղի են ունենում ծնողների ու երեխաների գործունեության և շփման ընթացքում՝ միջանձնային հարաբերությունների բոլոր ձևերում և տեսակներում, մասնավորապես իմացական, որտեղ ծնողները հանդես են գալիս որպես տեղեկատվության ստացման, գաղափարների, կարծիքների, հայացքների ձևավորման աղբյուր, ուստի.

- ✓ Դպրոցի և ընտանիքի համագործակցության կազմակերպման հիմնական նպատակը պետք է լինի ընտանիքի ներգրավումը դպրոցի ուսումնադաստիարակչական գործընթացի կառավարման համակարգում, որտեղ ծնողները պետք է լինեն հավասարազոր սուբյեկտներ:
- ✓ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցի և ընտանիքի համագործակցությունը ենթադրում է նրանց երեխաների՝ սոցիալականացման հավասարազոր սուբյեկտներ լինելը, դպրոցի կողմից ընտանիքին պետք է ցույց տրվի իրական հոգեբանական և սոցիալ-մանկավարժական օգնություն:

Ծնողները և ուսուցիչները պատասխանատվություն են կրում միևնույն սովորողի կրթության ու դաստիարակության համար, հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի, երբ վերջիններս մշտապես կապ պահեն միմյանց հետ, ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ,

ինչպես նաև փորձեն համատեղ ուժերով մշակել դաստիարակչական մեխանիզմներն ու դրանց լուծման ուղիները:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պայմանավորող հանգամանքներից է ծնողների իմացական կարողությունները, հայացքներն ու դիրքորոշումները: Շատ կարևոր է նաև ծնողի կողմից ազնիվ ու անվերապահ մոտեցումն ուսուցչին, դպրոցին: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, վերջինս ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում :

Ուսումնական գործընթացին ծնողների ներգրավվածությունը մեծապես կարող է պայմանավորել սովորողների հաջողությունը: Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով:

Ամփոփելով, պետք է նշենք, որ ուսուցչի և ծնողի համագործակցության գործընթացը ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացում: Համագործակցության ընթացքում դպրոցը պետք է ներգրավի ծնողին դպրոցական միջավայրում՝ թույլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին՝ հանդես գալով որպես լիիրավ գործընկերներ: Այս գործընթացը նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը: Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողի սոցիալական, հուզական և անձնային հատկանիշները: Նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, գնահատում են երեխայի ձեռքբերումները, հաճույքով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ:

ԳԼՈՒԽ 2. ՈՒՍՈՒՑՉԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Փաստ է, որ ուսուցիչ-ծնող (խնամակալ) համագործակցությունը անժխտելի դրական ազդեցություն է թողնում ուսումնական գործընթացի բոլոր մասնակիցների վրա և բարձրացնում է ուսումնական գործընթացի արդյունավետությունը: Ուսուցիչ-ծնող համագործակցությունը բարդ գործընթաց է, որն ունի բազմաթիվ սկզբունքներ[2].

Սկզբունք 1. Վստահել: Արդյունավետ շփման համար կարևոր է, որ ուսուցիչները վստահեն ընտանիքին, իսկ ընտանիքն էլ իր հերթին վստահի ուսուցիչներին: Երբ ծնողը ինչ-որ բան է պատմում ուսուցչին, պետք է վստահեցնել նրան, որ այդ տեղեկությունը գաղտնի է:

Սկզբունք 2. Պահպանել երկկողմանի կապ: Այն թույլ է տալիս երկու կողմերին էլ հասկանալ միմյանց պահանջները և նպատակները: Երբ ուսուցիչը խոսում է ծնողի հետ, հարցերի միջոցով կարող է տեղեկություն հավաքել ոչ միայն սովորողի, այլև նրա ընտանիքի վերաբերյալ:

Սկզբունք 3. Համագործակցել: Կողմերը ընդհանուր եզրեր պետք է գտնեն հաջողության հասնելու համար: Ուսուցիչը պետք է միշտ հիշի, որ ընտանիքները տարբեր են և բոլորի հետ գործընկերային հարաբերություններ ստեղծելիս, պետք է ցուցաբերել անհատական մոտեցում:

Սկզբունք 4. Կրել ընդհանուր պատասխանատվություն: Ծնողները և ուսուցիչները պետք է կիսեն պատասխանատվությունը տանը և դպրոցում ծագած խնդիրների լուծման ժամանակ՝ սահմանելով հստակ նպատակներ, ռազմավարություններ և ձգտելով միևնույն արդյունքին:

Սկզբունք 5. Պահպանել ջերմ հարաբերություններ: Ուսուցիչը ծնողների հետ պետք է պահի ջերմ, բարիդրացիական հարաբերություններ: Յուրաքանչյուր իրավիճակում պետք է հասկանա և առաջարկի իր աջակցությունը ծնողին:

---

[2] Зверева О.Л., Кротова, Т.В. Общение педагога с родителями в ДОУ[Текст] / О.Л. Зверева, Т.В. Кротова. - М.: Сфера, 2005. – 80с., с. 34.

Սկզբունք 6. Խթանել և քաջալերել: Որպեսզի ծնողը իրեն զգա արժեքավոր, ուսուցիչը պետք է լսի ծնողի առաջարկները, ուսուցման արդյունավետ կազմակերպելու իր մոտեցումները: Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներ են: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել որակներ: Համագործակցության ընթացքում ծնողները պետք է նկատեն ուսուցիչների կողմից թույլ տրված սխալները և ուսուցիչները՝ ծնողների կազմակերպած ընտանեկան դաստիարակության ընթացքում նկատված սխալները:

Գոյություն ունի ուսուցչի և ընտանիքի համագործակցության մի շարք ձևերի և միջոցների համալիր, որը նպաստում է ծնողների և երեխաների վրա ուսուցչի ներգործության բարելավմանը: Դրանց թվում են.

- ✓ ընդհանուր դպրոցական և դասարանական ծնողների ժողովները,
- ✓ մանկավարժական համաժողովները,
- ✓ ծնողական դասախոսությունները,
- ✓ գործնական խաղերը և բաց դռների օրերը,
- ✓ դպրոցական ընդհանուր կայքում դասղեկի կայքէջը,
- ✓ ծնողների հետ տարվող աշխատանքի անհատական ձևերը՝ այցելություն ընտանիք, անհատական խորհրդատվություն և աշխատանք ծնողական ակտիվի հետ:

Ծնողների հետ անհատական աշխատանքը կարող է ներառել[3].

- որոշակի ծրագրով կանոնավոր մանկավարժական զրույցները ինչպես ծնողների, այնպես էլ նրանց երեխաների հետ,
- դպրոցի մանկավարժներից և հրավիրված մանկավարժագետներից կազմված խորհրդատվական խմբերի աշխատանքը դաստիարակության առանձին հարցերի վերաբերյալ,
- ծնողների անհատական խորհրդատվությունները,
- ծնողների ներգրավումը մանկավարժական ինքնակրթության մեջ:

[3] Доронова, Т. Н. Взаимодействие дошкольного учреждения с родителями [Текст] /Т. Н.Доронова// Дошкольное воспитание. - 2004. -№ 1. -, С. 60 - 68.

Հավելենք, որ ուսուցիչ-ընտանիք համագործակցության հիմնական ձևը դասարանական ծնողական ժողովներն են, որը պետք է իրականացնել որոշակի փուլերով: Կարևորվում են նաև ծնողների հետ ուսուցչի համագործակցության մյուս ձևերը՝ մանկավարժական տեղեկացվածությունը, դպրոցի սովորողների, ընտանիքների և համայնքում առկա պետական հասարակական կազմակերպությունների փոխօգնության, ծնողների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքների կենտրոնների գործունեությունը:

Ուսուցչի և ընտանիքի համագործակցությունը անհրաժեշտ է իրականացնել հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Սովորողների ուսումնաճանաչողական արդյունավետ գործունեության և ակտիվության ապահովման ռազմավարության և մարտավարության մշակում:
2. Ուսուցիչների, սովորողների և նրանց ծնողների փոխգործակցության երկարաժամկետ համալիր ծրագրի մշակում՝ ընտանեկան դաստիարակության ավանդույթների վերածնման նպատակով:
3. Ծնողների հոգեբանամանկավարժական, սոցիալական գիտելիքների հարստացման ուղղությամբ պլանավորված անընդմեջ աշխատանքների կազմակերպում:
4. Ընտանեկան դաստիարակության դրական փորձի փոխանակում համադպրոցական մակարդակում:
5. Ուսուցիչների, ծնողների և երեխաների համաստեղծագործական գործունեության և ազատ ժամանակի կազմակերպում՝ որպես փոխգործակցության կազմակերպման լավագույն տարբերակ:

Դպրոցում կրթության բովանդակության բարդացման, սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության օրեցօր ավելացման արդի պայմաններում ոչ միայն դպրոցը, այլև երեխաներն են զգում ծնողների մանկավարժական գրագիտության անհրաժեշտությունը: Ուստի անհրաժեշտ է որոշակիացնել ընտանիքի կրթադաստիարակչական գործառույթները դպրոցի աշխատանքային պլանում ծնողների ուսուցման ծրագրի ներկայացման, ինչպես նաև որոշակի մանկավարժական պայմանների և ընտանիքի հետ համագործակցության նոր ձևերի և մեթոդների մշակման միջոցով: Ըստ իս՝ ծնողներին մանկավարժական աջակցության բովանդակությունը պետք է լինի հետևյալը՝

- ✓ տեսական պարապմունքներ՝ ծանոթացում ուսուցման սկզբունքներին, մեթոդներին, ձևերին,
- ✓ գործնական պարապմունքներ՝ մանկավարժական խնդիրների լուծում, հաղորդակցման ձևեր, էքսկուրսիաների պլանավորման և նախապատրաստման աշխատանքներ:

Ժամանակակից ընտանիքին ցույց տրվող մանկավարժական աջակցությունն ունի իր առանձնահատկությունները, որոնցից են՝

1. ծնողների տիպաբանության հաշվառումը,
2. ծնողների՝ մանկավարժական օգնություն ստանալու և մանկավարժական գիտելիքների ձեռք բերելու պահանջմունքը,
3. ընտանիքում ծնողների երեխաների հետ փոխգործակցության ընթացքում ծագած հակասությունների բնույթը,
4. ընտանեկան դաստիարակության ոճերը:

Երեխայի արդյունավետությունը դպրոցում պայմանավորված չէ միայն ուսումնական գործունեության հաջող մեկնարկով: Դրան հասնելու քայլերը պետք է կատարվեն ավելի վաղ՝ մինչ դպրոց հաճախելը: Խոսքն այն մասին չէ, թե ուսման ընթացքում ծագած խոչընդոտներից, մասնավորապես դպրոցական կյանքի առաջին տարում առկա մի շարք խնդիրներից խուսափելու համար հարկավոր է երեխային դպրոց ճանապարհել արդեն գրաճանաչ ու բազում գիտելիքներով ծանրաբեռնված: Պարզապես անհրաժեշտ է հնարավորինս օգնել երեխային և ծնողին այդ դժվարությունները սահուն, առանց հուզական լարվածության ու հոգեկան ապրումների հաղթահարելու համար: Այսօր էլ այդ երեխաներին ընդունում ենք դպրոց և բախվում մի շարք խնդիրների, որոնք ձևավորվել են դեռևս երեխայի նախադպրոցական տարիքում:

Ուսուցիչը պետք է ձեռնամուխ լինի համակարգված հոգեբանամանկավարժական մեթոդական աշխատանքի: Այն նպատակ է հետապնդում օգնել ծնողին՝ ճիշտ կողմնորոշվելու, դպրոցականի առջև ծառացած խնդիրները հասկանալու և դրանք ժամանակին ու արդյունավետ լուծելու համար: Պետք է ապահովել ծնողների լիարժեք մասնակցությունը երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացին:

Երբեմն ծնողները անհիմն ու ավելորդ մտահոգություն են դրսևորում, թե երեխան կթերանա, չի կարողանա սովորել դպրոցում: Դրանք պատճառ են դառնում, որ դեռ դպրոց

չհաճախած երեխան խուսափի, վախենա և հրաժարվի դպրոցական դառնալու ցանկությունից: Այսպիսով երեխայի բարեհաջող մուտքը դպրոց, կախված է նրա հոգեկան պատրաստվածության աստիճանից: Այստեղ մեծ է ծնողի դերը:Այն պետք է երեխայի համար լինի հոգեկան հավասարակշռության, պաշտպանվածության և ապահով զգացողության օրրան: Որպեսզի երեխան հաղթահարի իր տարիքին բնորոշ վախերը, անհրաժեշտ է նախնառաջ պարզել ծնողների թաքնված, չգիտակցված վախերը:

Կրտսեր տարիքի երեխաները գտնվում են սեփականության ընկալման առումով բավականին բարդ փուլում: Նրանք դեռևս նոր են փորձում դիմադրել անմիջական մղումների ազդեցությանը: Եթե մի բան նրանց դուր է գալիս, միշտ չէ, որ ընդունակ են զսպել այն անմիջապես վերցնելու բնական ցանկությունը:

Ամփոփելով, ուսուցչի և ծնողի համագործակցությամբ նրանք դառնում են ուսուցման գործընթացի և արդյունքների համար պատասխանատվության կրողներ, իսկ ուսուցումն անձնակենտրոն է: Կբարձրանա դպրոցի վարկանիշը, հեղինակությունը, հարգանք կստեղծվի ուսուցչի և ուսման նկատմամբ: Համագործակցության արդյունքում կձևավորվի համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, մարդասիրության ոգով դաստիարակված, մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող սերունդ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Լինելով Ջերմուկի Մ. Գորկու անվան թիվ 1 հիմնական դպրոցի Հայոց լեզվի և Հայ գրականության ուսուցչուհի՝ հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացրել եմ գիտափորձ՝ հարցման և դիտարկման մեթոդների կիրառմամբ։

Մեզ անհրաժեշտ էր ստանալ ժամանակակից ծնողների ու երեխաների փոխգործակցության վիճակի իրական պատկերը, որոշել ուսուցչի դերը ընտանիքում ծնողների ու երեխաների փոխգործակցության հիմնախնդիրների լուծման գործում, գրանցել ուսուցիչի, ծնողների ու երեխաների փոխհարաբերությունների զարգացման ժամանակակից միտումները, որոշել ծնողների ու երեխաների փոխգործակցության բովանդակությունը և ուղղվածությունը, նրանց բնավորության գծերը, ինչպես նաև որոշելու ծնողների՝ դպրոցի և ուսուցիչների հետ համագործակցության ինտենսիվությունը և պատրաստակամությունը։

Դիտարկման մեթոդի կիրառումը նպատակ է ունեցել ուսումնասիրելու սովորողների կրթական մակարդակը, դասին պատրաստված լինելը, դասից դուրս իրենց ցուցաբերած վարքագիծը, ինչպես նաև նրանց անհատական բնավորության գծերը և վարքագիծը։ Գիտափորձը կատարվել է դպրոցի 7-րդ դասարանում, որն ունի 19 աշակերտ՝ 6 աղջիկ և 13 տղա։ Դիտարկման մեթոդի շնորհիվ առանձնացրեցի այն հիմնական առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են սովորողների մոտ։ Այս ընթացքում պարզեցի, որ 19 աշակերտներից 8-ը հավելյալ պարապում են դասապատրաստողների մոտ՝ նշելով, որ ծնողները բավարար ժամանակ չեն տրամադրում իրենց դասերին։

Սովորողների ծնողների հետ իմ կապը պահպանվում է սահմանված պլանով կազմակերպվող ծնողական ժողովներով, անհատական քննարկումներով։ Հետազոտության շրջանակներում ժողովներից մեկի ընթացքում ծնողներին է տրամադրվել իմ կողմից կազմված հարցաթերթիկ, (Հավելված 1.) որի նպատակն էր, բացահայտել ծնող-երեխա համագործակցությունը կրթական մակարդակում։

Հետազոտությունում բացահայտվեց, որ ընտանիքում ծնողների և երեխաների արդյունավետ փոխգործակցության վրա էապես ազդում են նրանց անձնային որակները, համատեղ գործունեությունը, ծնողների մանկավարժական գիտելիքները,

դաստիարակվածության մակարդակը, ազատ ժամանցի կազմակերպման կարողությունները: Այդ նպատակով ուսումնասիրվեցին ծնողների կարծիքը իրենց երեխաների անձնային որակների, համատեղ գործունեության մասին, ինչպես նաև երեխաների կարծիքները ծնողների անձնային որակների և դիրքորոշումների մասին: Սովորողների և նրանց ծնողների հարցման արդյունքները վկայում են, որ վերջին շրջանում զգալիորեն իջել է ծնողների հետ երեխաների շփման ու համատեղ գործունեության իրականացման մակարդակը:

Աղյուսակ 1.

Ծնողների և երեխաների փոխգործակցության վերաբերյալ հարցումների արդյունքները[4]

Հարցումների արդյունքները	Այո	Մասամբ	Ոչ
Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար	8	4	7
Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում	7	8	4
Կարևորու՞մ եք գրական հայերենով տանը խոսելը	8	5	6
Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները երեխաների հետ	2	4	16
Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ	6	4	9
Գիտե՞ք, թե ձեր երեխան որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը	10	9	-
Ձերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդույթներից	6	3	10
Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման գործընթացում	4	10	5

Մեր կողմից կատարված հետազոտությունը թույլ տվեց եզրակացնել, որ որակական դրական փոփոխություններ են արձանագրվել փոխգործակցող կողմերի՝ ուսուցիչների, ծնողների և երեխաների հարաբերություններում. ստացվել են նպատակաուղղված աշխատանքի դրական արդյունքներ, միաժամանակ ծնողների և երեխաների

[4] Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմնվելով Հավելված 1. հարցաթերթիկների ամփոփման վրա:

փոխգործակցության մեջ ծագած հակասական իրավիճակները հաջողությամբ հաղթահարվում են, ստացված արդյունքները հիմք են տալիս հաստատելու, որ դպրոցի, ընտանիքի և երեխաների համագործակցության դրական բնութագրերը կարող են փոխվել և օպտիմալացվել, եթե այդ փոխգործակցությունը կազմակերպվում է համատեղ ստեղծագործական գործընթացում՝ հաշվի առնելով դպրոցի, համայնքի ընդհանուր և կոնկրետ առանձնահատկությունները, ինչպես նաև համակարգային, տարբերակված, կոմպետենտային մոտեցումները:

Հավելենք, որ հետազոտության համար հենք է հանդիսացել մեր մանկավարժական պրակտիկայի ընթացքում կատարած մշտադիտարկումը, սահմանել ենք ծնողների 3 խումբ և հետևյալ վերջիններիս՝ դպրոցի և ուսուցիչների հետ համագործակցության ինտենսիվությանը, արագ արձագանքմանը.

ԽՈՒՄԲ-1՝ գերակտիվ ծնողներ

ԽՈՒՄԲ-2՝ ակտիվ ծնողներ

ԽՈՒՄԲ-3՝ պասիվ ծնողներ

- Գերակտիվ ծնողների երեխաներն ավելի կազմակերպված են հաճախում դպրոց, նկատվում է, որ հագուստը կոկիկ է, գրքերն ու տետրերը մաքուր: Ծնողները բաց են համագործակցության համար, կարող են աջակցել դասարանային ու կրթական զանազան հիմնախնդիրների լուծմանը:
- Իր երեխայի դպրոցական կյանքին մասնակցելու ակտիվության համեմատաբար նվազ մակարդակ ունեցող ծնողների երեխաները նույնպես ունեն առաջադիմություն ուսումնառության գործընթացում և նորմալ հաճախելիություն: Ծնողը ևս ժամանակ առ ժամանակ հետաքրքրություն է ցուցաբերում դպրոցական կյանքին:
- Պասիվ խմբի ծնողները որպես ավելորդ բեռ ու պարտադրանք են համարում ծնողական ժողովներին մասնակցելը, ուսուցիչների հետ առողջ հարաբերությունների հաստատումը: Նման ծնողների երեխաներն ունեն կոմպլեքսներ և ցածր առաջադիմություն, սոցիալականացման հետ կապված խնդիրներ:

Ամփոփելով, նշենք, որ համագործակցության գործընթացի արդյունավետությունը մեծ մասամբ կախված է տվյալ դպրոցում դաստիարակության գործընթացը կառավարողի՝ ուսուցչի անհատական առանձնահատկություններից,

մանկավարժական վարպետությունից, կառավարման ոճերի համադրման կարողությունից։ Հաշվի առնելով նոր ժամանակների մարտահրավերները, կրթական համակարգի պահանջներն ու սովորողների՝ ամենօրյա ռեժիմով փոփոխվող հետաքրքրություններն ու պահանջմունքները՝ կարծում ենք, որ ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացման համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում, արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով «Ուսուցչի համագործակցումը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում» թեմայով հետազոտական աշխատանքը և համադրելով մեր կողմից կատարված գիտափորձի արդյունքները՝ հանգել ենք հետևյալին.

- ✓ Կրթության որակը չի կարող լինել ավելին, քան ուսուցիչների որակն է: Վերջին տարիներին համոզիչ հետազոտական ապացույցներ կան այն մասին, որ կրթության ոլորտում հաջողության հասնելու առանցքային փոփոխականը ուսուցիչներն են:
- ✓ Ուսուցչի և ծնողի համագործակցությունը կարևոր գործընթաց է, որն իր հերթին ենթադրում է միասնական մոտեցումներ և պարտավորություններ երեխայի կրթական գործընթացում: Դպրոցը պետք է ներգրավի ծնողին դպրոցական միջավայրում՝ թույլ տալով նրանց ակտիվ մասնակցել դպրոցի կազմակերպած միջոցառումներին, այն նաև նպաստում է ծնողավարման հմտությունների զարգացմանը: Համագործակցության արդյունքում փոփոխվում են ծնողի սոցիալական, հուզական և անձնային հատկանիշները: Նրանք սկսում են ավելի լավ հասկանալ իրենց երեխաներին, գնահատում են երեխայի ձեռքբերումները, հաճույքով միանում են երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին, դրական հարաբերություններ են ստեղծում իրենց երեխայի ուսուցիչների հետ:
- ✓ Մեր կողմից իրականացված գիտափորձի ժամանակ ստացված տվյալները ցույց են տալիս, որ վերջին ժամանակներում վերջին շրջանում զգալիորեն իջել է ծնողների հետ երեխաների շփման ու համատեղ գործունեության իրականացման մակարդակը, ուստի անհրաժեշտ է բարձրացնել ուսուցիչ-սովորող-ծնող կապի արդյունավետությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Доронова, Т. Н. Взаимодействие дошкольного учреждения с родителями [Текст] /Т. Н.Доронова// Дошкольное воспитание. - 2004. -№ 1. -, С. 60 - 68.
2. Зверева О.Л., Кротова, Т.В. Общение педагога с родителями в ДОУ[Текст] / О.Л. Зверева, Т.В. Кротова. - М.: Сфера, 2005. – 80с.
3. Микляева, Н.В. Создание условий эффективного взаимодействия с семьей[Текст] / Н.В. Микляева. - М., Айрис-пресс, - 2006. - 144с.
4. Петренко, М.В. Психология и педагогика[Текст] / М.В. Петренко. – М., «Быстров», 2009. – 42с.

Հավելված 1.

Հարց 1. Տրամադրու՞մ եք ժամանակ ձեր երեխաների հետ համատեղ ժամանցի համար:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 2. Օգնու՞մ եք ձեր երեխային ուսման գործում:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 3. Կարևորու՞մ եք գրական հայերենով տանը խոսելը

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 4. Քննարկու՞մ եք ընտանեկան խնդիրները երեխաների հետ:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 5. Իրականացնու՞մ եք համատեղ ստեղծագործական աշխատանք ձեր երեխաների հետ:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 6. Գիտե՞ք, թե ձեր երեխան որտեղ է անցկացնում իր ազատ ժամանակը:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 7. Գերբազատվա՞ծ է արդյոք ձեր երեխան շփման բարդույթներից :

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ

Հարց 8.Կարողանու՞մ եք հաղթահարել հանդիպող դժվարությունները երեխայի դաստիարակման գործընթացում:

- ☐ Այո
- ☐ Մասամբ
- ☐ Ոչ